Դավիթ Փայլակի Դավթյանին պատկանող գույքի կրկնաճուրդ-վաճառք կազմակերպելու մասին

2026-10-27 14:28:56

Հայտատու	Ֆիզիկական անձինք
Տեսակ	Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հիմք	Սնանկության մասին ՀՀ օրենքի 76-րդ հոդված

26.10.2026թ. ժամը 12:00-ին հայտարարված Դավիթ Դավթյանին պատկանող գույքի կրկնաճուրդ-վաճառքը չի կայացել:

2026 թվականի նոյեմբերի 20-ին ժամը 12:00-ին ք. Երևան, Չեխովի 23, բնակարան 68 հասցեում Դավիթ Դավթյանի սնանկության գործով կառավարիչ Վահե Նազարեթյանի կողմից կանցկացվի պարտապանին պատկանող գույքի աճուրդ-վաճառք:

Լոտ 1. Գնահատվող անշարժ գույքը կրում է 05-040-0052-0002 կադաստրային ծածկագիրը: Զբաղեցնում է 1,674 քմ մակերես: Հողամասը զահմանազատված է պարսպով: Խանրաբեռնված է 4 շինությամբ՝ բնակելի տուն 38,4 քմ, գոմ 70 քմ, ցախանոց 15 քմ և ավտոտնակ 216.7 քմ:
Բնակելի տունը 1 հարկանի է, տանիքը երկլանջ: Ընդհանուր առմամբ գտնվում է վատ վիճակում, ներքին հարդարումը, պատուհաններն ու դռները հին են, ներքին հարդարումը ևս հին: Ընդհանուր ունի վերանորոգման կարիք:
Ավտոտնակն ունի 3 առանձին մուտք: Ավտոտնակը ունի մի քանի սենյակներ, որոնք ծառայում են որպես բնակելի սենյակներ: Ընդհանուր գտնվում է նորմալ վիճակում:
Գույքի նկատմամբ գրանցված է պարտատեր «ԱյԴի Բանկ» ԲԲԸ գրավի իրավունքը:
Մեկնարկային գինը՝ 12,047,000 / տասներկու միլիոն քառասունյոթ հազար / ՀՀ դրամ:

Աճուրդը անցկացվում է ՀՀ արդարադատության նախարարի 16.03.2020թ. թիվ 116-Ն հրամանով սահմանված կարգով:
Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝ ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը, իսկ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ դրանց պետական գրանցումը հավաստող փաստաթղթերի պատճենները, աճուրդի մասնակցության վճարի և կանխավճարի

վճարումը հավաստող փաստաթղթերը։
Մասնակցության վճարը և նախավճարը կազմում են Լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1% և 5%-ը։ Աճուրդի մասնակցության վճարը և նախավճարը վճարվում է կանխիկ կամ փոխանցումով՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ում Դավիթ Դավթյանի թիվ 220096064179000 սնանկության հատուկ հաշվին։
Աճուրդին մասնակցել ցանկացողները ոչ ուշ քան աճուրդի անցկացման օրվանից 5 օր առաջ կարող են հայտ ներկայացնել ՀՀ Սնանկության դատարան / հասցե՝ ք. Երևան, Օտյան 53/2 /։
Աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը։
Գույքի փոխանցման և պետական գրանցման հետ կապված բոլոր ծախսերը կատարվում է գնորդի կողմից, իսկ գործարքների իրականացումը՝ Դատարանի և այլ համապատասխան մարմինների կողմից որոշումների կայացումից հետո։
Աճուրդի կանոնակարգին և լոտին ծանոթանալու համար զանգահարել սնանկության գործով կառավարիչ Վահե Նազարեթյանին, հեռ. 077443822, 096696779։

37477443822

vahnaz@mail.ru

ԵՐԵՎԱՆ Վ. ՇԵՆԳԱՎԻԹ 1 Փ. 47/5 Տ